

123. ԴԵՐԸ ՆԱՆ ՏԸՎԱՐԱԾԸ

Մին տըվարած ա ինձում, լոխմինին անա հախկը ինքյ ա օնում, դերին անա կարում չի ինքյ օնըն։ Հինչ անում ա, ղաչանքպըղատանք ա անում, դերն ուրան հախկը տամ չի։

Մին օր ժուղովուրթը վըեր օղում ըն ժամումը հըվաքվըեն, դերն էլ քարոզ պիտի կանըթի, ճելլի քյինամ ա ժամը, վըեր ժամն օրհնեն։ Տըվարածն էլ ճելլի կյամ ա նի մնում խորանը, դերը ժամն ուրհնելիս վըեր ասում ա՝ տեր ողորմյա, տըվարածը խուրանան թա՝ չեմ ողորմյա։ Դերը գյանգում ա թա խոսողն ասված ա, ասում ա խե՞ չըս ողորմյա, տըվարածը թա՝ շորերըտ հանե, ողորմյամ։ Դերը վըեր շորերը լոխ հանում ա, մնամ տըկլոր, նորից ա ասում՝ տեր ողորմյա, տըվարածը նորից թա՝ չեմ ողորմյա, դերը թա՝ խե՞ չըս ողորմյա, տըվարածը թա՝ կուռնըերըտ տիր քըմակետ, կյըվազանըտ էլ կուռնըերետ ղաթումը, ողորմյամ։

Դերը վըեր կուռնըերը քըմակեն խաչ ա անում, կյուվազանն էլ տինում ղաթումը, տըվարածը խուրանան տանում ա կյամ, ծըեռքեն սըղնե խուլխանգանա մհակավը մեհետ դերին կըլխավը նի հըսցնում, դերին իրեսան ճրանը պըլթամ ա, ճրանը վազ տալամ, կյուվազանն էլ մաշկեն խաչ ըրած կուռնըերեն ղաթումը տիրած վըեր ա կյամ, վըեր փախնի։ Վըեր քյինամ ա թա մղակավը տանա կյա, կյուվազանը մղակեն կուխկերքեն նի յա կյամ, դերն իրեսեն յիրա վըեր ա ինգյանում...

Վըեր եր ա կենում, իտի տըկլոր ժամեն կոխկավն օղում ա թա փախնի, մին պառավ տըեսնում ա, ասում.—Ա՛ դեր, ա՛ դեր, սոր ամսի քանի՞սն ա։ Դերը թա՝ ամըեսս, ամըեսս, հինչ ամըեսս, սուրփըերը կըտաղալ ըն, մարթ ըն կրակ տամ, տու տանա ըս եկալ ամըեսս ը՞ս հըրցնում։